Արձանագրություն N 3

ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով ՀՀ Տավուշի մարզի ք.Դիլիջանի կոմպոզիտորների միության ստեղծագործական տան Բեթհովենյան դահլիճի վերանորոգման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17 մայիսի 2018թ.
ժամը 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Քոչարյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ն. Մանուկյան / բացող /
	Ռ. Ադամյան / բացող /
	Վ. Առաքելյան /գնահատող/
	Գ. Գևորգյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Հարությունյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա.Քոչարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- <<ՀԹ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ>> ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, որտեղ առկա էին հետևյալ անհամապատասխանությունները.

- բացակայում էին նախկինում կատարած պայմանագրի N 3 և N 3.1 հավելվածները,
- նախկինում կատարած պայմանագրի N 1 և N 2 հավելվածներում, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրում և հանձնման-ընդունման արձանագրությունում առկա էին անճշտություններ,
- 5.2 հավելվածի որակավորում այունակի և մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթի (դիպլոմ) տվյալները չէին համապատասխանում միմյանց:

1.2 Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 2018 թվականի մայիսի 15-ի նիստին որոշեց.

- ծանուցել <<ԹԱՀԳ. ԳՐԻԳ>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են և սահմանված ժակետում ներկայացվել:

- Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել են առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և կոմիտեի կողմից ստացված տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա.Քոչարյան)

2.1 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<ԹԱՀԳ. ԳՐԻԳ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա.Քոչարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա.Քոչարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամ՝ _____ Ն. Մանուկյան

_____ Ռ. Ադամյան

_____ Վ. Առաքելյան

_____ Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Հարությունյան